ՀՏԴ 358.4

# ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

*Վ. Բ. Յարամիշյան*
ՆԶՊ և ֆիզ.պատրաստության ամբիոն

*Հոդվածում քննարկվում, վերլուծվում և հիմնավորվում է Զինված ուժերում մարտական պատրաստության ու դաստիարակչական աշխատանքի միասնական համակարգի ապահովման ուղղությամբ կառավարման մարմինների կատարած աշխատանքի արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը:*

Մարտավարության որակի բարձրացման եւ կարգապահության ամրապնդման առաջնահերթ խնդիրը պահանջում է, որ ուսումնական գործընթացում առանձնահատուկ ուշադրություն դարձվի մարտական պատրաստության արդյունավետության բարձրացմանը եւ դաստիարակչական աշխատանքի որակի բարելավմանը: Որպես ուղենիշ կարող է ծառայել «Ակտիվ ուսուցում, մարտական վարպետություն, հաստատուն առաջընթաց» կարգախոսը, որն, ըստ էության, հաստատում է ուսուցման եւ դաստիարակության միասնական համակարգը կյանքի կոչելու ճանապարհով դեպի բանակաշինության առաջընթաց ընթանալու գաղափարը:

Այս գաղափարի իրականացման համար առկա են բոլոր նախադրյալները: Ակնհայտ է, սակայն, որ մեծ գաղափարները հեշտությամբ իրականություն չեն դառնում, մինչեւ չեն հաղթահարվում պրակտիկ գործունեության ընթացքում երեւան եկած ու մինչ այդ աննշան թվացող խոչընդոտները:

Զինված ուժերի մարտունակությունը որոշվում է բազմաթիվ գործոններով, որոնցից ամենահիմնականներից են անձնակազմի կայուն բարոյահոգեբանական վիճակը և արդյունավետ մարտական պատրաստությունը: Զինծառայողների այս հատկանիշներն անխզելիորեն փոխպայմանավորված ու փոխկապակցված են եւ, ինչպես վկայում է զինված հակամարտությունների, այդ թվում արցախյան պատերազմի փորձը, վճռական ազդեցություն են ունենում պատերազմի ընթացքի ու ելքի վրա: Պատահական չէ, որ բոլոր անվանի զորավարները կարեւոր նշանակություն են տվել զինվորական ուսուցման ու դաստիարակության հարցերին, որոնց տակ հասկացվել է ենթակաների մոտ բարձր մարտական ու բարոյական հատկանիշների ձեւավորման կազմակերպված ու նպատակաուղղված գործընթացը: Այս հիմնահարցին հսկայական նշանակություն է տվել նաեւ ԼՂՀ պաշտպանության նախարար, ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Ս. Օհանյանը. «Անհրաժեշտ է հասկանալ նաեւ, որ դաստիարակության գլխավոր նպատակը մարտական վարպետությամբ օժտված պրոֆեսիոնալ զինվոր, ներդաշնակված կոլեկտիվ կամ ստորաբաժանում եւ, ի վերջո, մարտունակ բանակ ունենալն է: Որտեղ բարձր հիմքերի վրա է դրված մարտական պատրաստությունը, այնտեղ առկա է պատշաճ կարգապահություն, ընդհանուր կարգ ու կանոն, կազմակերպված զորքերի ծառայություն եւ այդ ամենով պայմանավորված բարձր մարտունակություն»:

Անձնակազմի հետ տարվող աշխատանքում հատուկ ուշադրություն պետք է դարձվի այնպիսի հատկանիշների ձեւավորմանը, որոնք կախում չունեն մասնագիտությունից, ծառայողական դիրքից: Խոսքը բարձր մարտական վարպետության, հայրենասիրության, ծառայողական պարտքին հավատարիմ լինելու, պատվի, կատարողականության, ընկերականության, հոգեբանական կայունության, համարձակության, քաջության ու արիության մասին է: Այս ցուցակը կարելի է շարունակել: Ակնհայտ է, որ նշված հատկանիշների ձեւավորումը հնարավոր է միայն համակարգված մոտեցում ցուցաբերելու դեպքում՝ ուսուցման եւ դաստիարակության միասնական գործընթացի առկայության պայմաններում: Այլ խոսքերով՝ ամենօրյա ուսումնական գործընթացում հարկավոր է ուսուցանել ոչ միայն մարտի նորմատիվները եւ հնարները, այլեւ մշտապես կոփել զինծառայողների կամքը, նրանց մոտ մշակել բարձր մարտական ակտիվություն, գիտակցական վերաբերմունք՝ զինվորական պարտքի նկատմամբ, բարձր հայրենասիրություն եւ կարգապահություն:

Հասկանալի է, որ մարտին պատրաստ լինելը հնարավոր է դաստիարակել ու սովորեցնել ոչ այլ կերպ, քան ոչ ստանդարտ իրավիճակներում դժվարությունները հաղթահարելով, մեծ ծանրաբեռնվածության պայմաններում եւ դրա շնորհիվ՝ դիմացկունության որակներ սերմանելով:

Թե՛ մարտական ուսուցման եւ թե՛ դաստիարակչական աշխատանքի կազմակերպման հաջողությունը կախված է որակյալ պլանավորումից: Բոլոր միջոցառումները, որոնք միտված են զորքերի մարտունակության բարձրացմանը (այդ թվում ուսումնական եւ դաստիարակչական) պետք է լինեն փոխկապակցված եւ ուղղված լինեն միասնական նպատակի իրականացմանը, այն է. միավորումների, զորամասերի պատրաստ լինելը ըստ նշանակության գործելուն: Սակայն, անհրաժեշտ է խոստովանել, որ այժմյան բանակային իրականության մեջ նշված փոխգործակցությունը ոչ միայն անհրաժեշտ բարձրության վրա չի գտնվում, այլեւ ոչ հազվադեպ հակասական ուղղվածություն ունի եւ՛ ըստ ժամանակի ու տեղի, եւ՛ ըստ բովանդակության: Օրինակ,

հայտնի միտք է, որ «փորձադաշտը զինվորի ակադեմիան է», մինչդեռ զորամասերում դաստիարակչական աշխատանքը հիմնականում պլանավորվում և իրականացվում է մշտական տեղակայման վայրում: Ճիշտ է, վերջին ժամանակներս որոշակի աշխատանք է կատարվում տարբեր իրավիճակներում (մարտական հերթապահությունում, պահակային ծառայություններում, զորավարժությունների, կրակային և մարտավարական պատրաստության պարապմունքների ժամանակ) դաստիարակչական միջոցառումների պլանավորման և իրականացման ուղղությամբ, սակայն շոշափելի տեղաշարժ առայժմ չկա: Պատճառն, ըստ երևույթին, այն է, որ որոշակիորեն անտեսված է ուսուցման կարևորագույն սկզբունքներից մեկը՝ *պարզից դեպի բարդը:* Ենթադրենք, զորավարժության համար մշակված է օրինակելի պլան՝ բոլոր մանրամասնություններով, սակայն մոռացության է մատնված մեկ կարևոր հանգամանք. զորավարժության մեջ ընդգրկված անձնակազմը մինչև այդ երբևիցե արտակարգ պայմաններում չի եղել, նրա հետ համապատասխան նախապատրաստական աշխատանք չի կատարվել: Ասվածի իմաստն այն է, որ մարտական պատրաստության կամ դաստիարակչական աշխատանքի ոչ մի պլանավորված միջոցառում չպետք է հետաձգվի կամ խափանվի, քանի որ նման անհետևողականությունն, ի վերջո, կհանգեցնի նշված սկզբունքի խախտմանը: Կխախտվի նաև ***հաջորդականության, միասնականության և համաձայնեցվածության*** սկզբունքը:

Պլանային և արդյունավետ մարտական պատրաստությունն ինքնին անձնակազմի դաստիարակության հզոր միջոց է, քանի որ մարտական ուսուցմանը մասնակից լինելը կարգավարժեցնում է զինծառայողին, սերմանում է հայրենասիրության, հպարտության զգացումներ: Բացի այդ, ներդաշնակ, անխափան ուսուցումը նպաստում է ծառայությունը գրավիչ դարձնելու դժվարին գործին:

Զինվորական ծառայությունը, հատկապես հատուկ պատրաստության որոշ տեսակներ, ինչպիսիք են հրետանու ճամբարային հավաքները, ականապատումը և ականազերծումը սակրավորների կողմից, հետախույզների դաշտային պարապմունքները մարտիկներից պահանջում են զգալի հոգեբանական լարվածություն, որը, հրամանատարի կողմից հմտորեն ուղղորդվելու դեպքում, կարող է էականորեն բարելավել զինծառայողների մոտ հոգեբանական կայունության հատկանիշների ձևավորման գործընթացը, որակներ, որոնք այնքան անհրաժեշտ են մարտական գործողությունների ժամանակ: Սակայն մարտական պատրաստության պլաններում և ծրագրերում թաքնված ներուժը լիով ծավալով չի օգտագործվում: Պատճառը նույնն է՝ համակարգված մոտեցման բացակայությունը: Մարտական պատրաստությունը և դաստիարակչական աշխատանքը պլանավորվում և իրականացվում (կառավարվում) են տարբեր վարչությունների, բաժինների, իսկ զորամասերում՝ պաշտոնատար անձանց կողմից: Այս առումով հետաքրքիր կլինի ուսումնասիրել աշխարհի առաջատար բանակների փորձը: Օրինակ, ամերիկյան բանակում զուտ դաստիարակչական բնույթի միջոցառումներ, որոնցով այնքան հագեցած է մեր բանակային առօրյան, հազվադեպ են պլանավորվում կամ գրեթե չեն պլանավորվում: Շեշտը դրվում է մարտական պատրաստության պարապմունքների ժամանակ դիմացկունության, տոկունության, ծառայողական աստիճանով վեր բարձրանալու ձգտման, իսկ զորավարժությունների ու մարտական խնդիրների կատարման ժամանակ՝ բարոյա-հոգեբանական ապահովման, հոգեբանական կայունության որակների ձևավորման վրա: Առաջադրանքի բարեհաջող կատարումը, նորմատիվների ու թեստերի լրացումը համարվում է ծառայողական պարտքի նկատմամբ զինծառայողի դրական վերաբերմունքի ակնհայտ դրսևորում և խրախուսվում է հնարավոր բոլոր միջոցներով: Ճիշտ է, ամերիկյան բանակն իր առջև դրված խնդիրների ծավալներով և բովանդակությամբ համեմատելի չէ մեր բանակի հետ և պիտանի չէ մեխանիկական կրկնօրինակման համար, սակայն իր փորձառությամբ, փոփոխվող իրավիճակին արագ արձագանքելու ունակությամբ, անձնակազմի մարտական ուսուցման և հոգեբանական-կամային հատկանիշների ձևավորման մակարդակով, որակական առումով, կարող է ծառայել որպես նմուշօրինակ: Չի կարելի մոռանալ, որ լավ է մեկ դույլ քրտինք թափել խաղաղ պայմաններում մարտական ուսուցման ժամանակ, քան մեկ կաթիլ արյուն՝ մարտի ժամանակ: Ուրեմն, անթույլատրելի է պարապմունքներ անցկացնող սպայակազմի գործունեության մեջ դեռևս հանդիպող երևույթը՝ պարապմունքների անցկացման պայմանների պարզեցումը, հեշտացումը: Զինվորը պետք է պարապմունքին մասնակցի այնպես, ինչպես կմասնակցեր մարտին՝ լրիվ հանդերձավորված, պատրաստ՝ ցանկացած առաջադրանքի կատարմանը: Պայմանների պարզեցումը հանգեցնում է նրան, որ զինծառայողը կորցնում է ինքնապահպանության զգացումը, զգոնությունը: Չի կարելի թեթևացնել զրահաբաճկոնը՝ հանելով պաշտպանող տարրերը, սաղավարտը կախել կողքից կամ պատահաբար «մոռանալ, թողնել զորանոցում»: Շատ բան, եթե չասենք ամեն ինչ, կախված է ստորաբաժանման հրամանատարից: Մինչդեռ, երբեմն կարելի է ականատես լինել մարտավարության պարապմունքի, որին զինվորը ներկայացել է տնային մաշիկներով, իսկ հրամանատարն՝ առանց հանդերձանքի: Վերլուծությունը ցույց է տալիս, որ արտակարգ պատահարների զգալի տոկոսը հետևանք է նման վերաբերմունքի: Կրկին դիմենք ՊՆ հրամանատարի ուղերձին «...լինենք ուշադիր ծառայության մեջ: Հասկանանք, որ ցանկացած անտարբերություն, անվտանգության կանոնների չպահպանելը, զենքը ճիշտ չօգտագործելը,

զինվորի մասնագիտության թույլ իմացությունը վերջնական արդյունքում հանգեցնում են ապառակարգ պատահարների, անտեղի կորուստների եւ, ի վերջո, նորից վաղվա զինվորի բացակայության»:

Սպայակազմի, հրամանատարների ու պետերի մակերեսային մոտեցման մասին են վկայում նաեւ գումարտակ-վաշտ-դասակ օղակներում հանդիպող պլանավորման ձեւականությունները, արդյունքների ամփոփումներ անցկացնելու անկարողությունը, զորամասերում ստեղծված հասարակական կազմակերպությունների (սպայական ժողով, սերժանտական խորհուրդ) անբավարար գործունեությունը: Հրամանատարը պարտավոր է ժամանակին ճշգրտել յուրաքանչյուր միջոցառման ուսումնա-դաստիարակչական խնդիրները, որոշել եւ ապահովել նրա գաղափարաքաղաքական ճիշտ ուղղվածությունը եւ, այնուհետեւ, հաստատակամորեն հասնել դրանց իրագործմանը:

Այսպիսով, պլանավորման, կազմակերպչական գործունեության հիմնական ջանքերն ուղղված պետք է լինեն մարտական պատրաստության եւ դաստիարակչական աշխատանքի միասնական համակարգի նպատակների իրականացմանը, ցանկացած բնույթի միջոցառում անցկացնելու համար պետք է հստակ որոշված լինեն ինչպես ուսումնական, այնպես էլ դաստիարակչական խնդիրները: Միայն այդ դեպքում հնարավոր կլինի հասնել «մարտական վարպետությամբ օժտված պրոֆեսիոնալ զինվոր, ներդաշնակված կոլեկտիվ կամ ստորաբաժանում եւ, ի վերջո, մարտունակ բանակ ունենալուն»:

## Ամփոփում

Արդի պայմաններում դժվար է գերագնահատել անձնակազմի բարոյա-մարտական ոգու վճռական ազդեցությունը զինված հակամարտության ընթացքի ու ելքի վրա: Հետեւաբար, բանակաշինության ներկա փուլում օբյեկտիվորեն աճում է կառավարման մարմինների կազմակերպչական գործունեության դերը մարտական պատրաստության ու անձնակազմի դաստիարակության միասնական համակարգի արդյունավետ գործունեության ապահովման բնագավառում:

Լուծելով մարտական պատրաստության խնդիրները, չպետք է մոռանալ, որ ոչ մի պլանավորված միջոցառում չի կարելի հետաձգել կամ հեշտացնել կատարման պայմանները, քանի որ դա անխուսափելիորեն կհանգեցնի ուսուցման կարեւորագույն սկզբունքներից մեկի՝ պարզից դեպի բարդն ընթանալու սկզբունքի խախտմանը: Լավ է մեկ դույլ քրտինք թափել խաղաղ պայմաններում՝ մարտական ուսուցման ժամանակ, քան մեկ կաթիլ արյուն՝ մարտի ժամանակ: Ուրեմն, անթույլատրելի և հանցավոր է պարզեցված սխեմաներով մարտական պատրաստության միջոցառումների իրականացումը:

Մարտական պատրաստության և դաստիարակչական աշխատանքի միասնական համակարգի ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքի հիմնական ջանքերն անհրաժեշտ է կենտրոնացնել անձնակազմի դաստիարակության նպատակների ձեռքբերմանը:

## Резюме

В современных условиях трудно переоценить влияние морально-боевого духа войск на ход и исход вооруженной борьбы. Поэтому на нынешнем этапе строительства и развития вооруженных сил объективно возрастает роль организаторской деятельности органов военного управления в обеспечении эффективного функционирования единой системы боевой подготовки и воспитания военнослужащих.

Решая задачи боевой подготовки, не следует забывать, что ни одно запланированное мероприятие боевой подготовки или воспитательной работы не должно быть отменено или перенесено, так как это ведет к нарушению основного принципа обучения войск - от простого к сложному. Лучше пролить ведра пота в мирной обстановке, в ходе боевой учебы, чем пролить одну каплю крови в бою. Поэтому недопустимо и преступно проводить мероприятия боевой подготовки по упрощенным схемам.

Таким образом, основные усилия организаторской деятельности по обеспечению эффективного функционирования единой системы боевой подготовки и воспитания должны сосредоточиваться на достижении целей воспитания личного состава.

## Գրականություն

1.Военная мысль., военно-теоретический журнал, 2004 / 2, Москва, "Воениздат",2004, 79 стр
2.Барынго П. С. и др., Справочник офицера - воспитателя., М., "За права военнослужащих",2003г., 368 стр
3.Коллектив авторов. Военная психология и педагогика,М.,"Совершенство", 1998г., 384 стр
4.Ս. Մ. Օհանյանի 2005թ. ուղերձը Պաշտպանության Բանակի անձնակազմին, Ստեփանակերտ. 2004թ., 28 էջ: